

ներէն, անոր փարթամ մարմինը կ'առաջնորդէր փեշ-
թոփճեան դասերուն: Մի ըսէք, թէ ինչո՞ւ կը գրուին այս
բաները: Խորհեցէք, որ ձեզմէ առաջ մենք կանք այդ տո-
ղերուն թախիծն ու խռովքը ապրելու: Ու գրելը ծիծաղելի
նարգիսականութիւն մը չէ, երբ անձի մը վրայէն շրջան-
ներ կը փրկէ կորուստէ:

- Վարժըպէ՛տ, ի՛նչ կ'ասի...

Կը կրկնեն գեղացիները, քիթերնուն ծակերը լայն-
լայն բանալով: Դուրսը հով է ելած ու կալերուն կողմէն
մղեղը ամպ-ամպ կը դառնայ՝ փոշի միայն դարձած
փողոցներուն աղիքներէն:

Օ՛, գեղացին այդ թշուառ գեղին: Հիմա, այսքան
հեռուէն կը տեսնեմ ու կը հասկնամ, թէ որքա՛ն իրաւ,
խորունկ, զատ մարդեր էին անոնք: Նիկիոյ շրջանի միւս
գեղացիներուն մօտ խաղողը, պտուղը, ձէթը, հողը իբրեւ
բարիք մասամբ կը մեղմէին գերութիւնը, թուրքին ահը:
Այս գեղացին տարբեր էր անոնցմէ ամէն երեսի վրայ:
Ընթացիկ ճամբաներէ անոր հեռու իյնալը կերպով մը
նպաստեր էր անոր այդ ինքնամփոփման, զանոնք մե-
կուսացնելով խճուղիէն, որ բարքերու ապականման կո-
յուղին դարձաւ կէս տարի պակաս միջոցի մէջ աւերելով
ինչ որ քսան տարու հալածանքը անզօր էր մնացեր գլուխ
հանելու: Քարքարուտ - անունն ալ կը կրկնէր նկարագիրը
այդ յօրինումին, մարմարեղէն, որ անոր կռնակը շինող
ամբողջ բլուրները կ'ընծայէր ազնիւ մարմարի բա-
ցօթեայ, անսպառ հանք մը - իրենց բնակավայրին հարա-
զատ զաւակներ, ըսի թէ կը զատուէին շրջանին միւս հայ
գեղացիներէն իրենց մոյնքին խիստ, ցանոտ, յարդաբոյր
գորշութեամբ մը, դնդերի չորութեամբ մը, պրկութեամբ
մը, որոնք անդուլ աշխատանքին արտաքին գրաւական-
ները կը կազմեն: Մալարիային հետ դարաւոր փորձուիլ
մը անշուշտ մորթերը կ'ընէր դէպի մագաղաթ, դէպի մե-
լան՝ որոշ երանգով: Բայց անգամ մը անցընելէ ետք հո-
ղին քննութիւնը, կը գտնէին չորութեան փառքը: «Զիդ
ու ոսկոր» բացատրութիւնը իմաստ մը ունէր անոնց այ-